

ՀԱՅ ԴՐՕՇՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՁ

(Շար. տես. 1919 թվ. էջ 189)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՐՕՇՆԵՐ

Ա. — ԵԱԳՈՒՄՆ: — Կոստանդնուսի յաբարամբ սրբեց հեթանոսական կամ աշխարհիկ վառը, և անոր առջև բացաւ եկեղեցւոյ դռները: Արևմտեայ մէջ ծանօթ է՝ որ Գրիգոր Գէն սկսեալ (731ին)՝ Հռովմայ քահանայապետը օրհնեալ զօշններ նուէր կը յղէին թագաւորաց, անոնց վրայ խորհրդաւոր նշաններով. և սրբազան զօշներ կը տարուէին նաև քահանայապետական թարրներու մէջ, վերջինս յիշուած 1119ին (Moroni, Գ, 87)՝ Վերև նկատեցինք Ս. Պետրոսի վառն ալ, զոր իննովկենտ Գ յղեց մերս Լեոնի: Ես ինքս ուրախութիւնն ունեցայ՝ Հռովմայ մէջ խուզարկութեանցս առթիւ՝ Ս. Կղեմէս եկեղեցւոյն ներքև հանդիպելու նոյն սրբոյն նշխարաց փոխադրութեան մէջ որմանկար տեսարանին, Թ-ԺԱ զարերէն, յորում կան երեք վառեր. կտաւը քառակուսի հաւասարակողմ, ստորոտն աւարտած աւտամածե. գոյնն է կարմիր կամ ծիրանի, ծածկուած ոսկի աստղերով. իսկ իրենց վերև՝ ընին ծայր մի մի ոսկի խոշոր խաչեր:

Մեր քով ևս ոչ նուազ հին յիշատակներ ունինք անոր: Է զարուն՝ վահանայ բանակին մէջ կրօնաւորաց խաչադրօշներ տանելն (աստ, 100) ապացոյց մ'է՝ թէ անոնց ընտանի էին վառերը: Կրնան նոյն իսկ եկեղեցւոյ մէջ գործածուածներէն լինել աւտոնց կրածները՝ քան բանակին սեպհականներէն: Այնուհետև աւելի յաճախ կը հանդիպինք եկեղեցական զօշներու:

Բ. — ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ: — Կարևորագոյնն է սա, և ամենէն յառաջ մեր նկատելին: Մեծ էր աղբսն ասոր ու գաւազանին մէջ, որ մինչև ցօթի զար խաչազուլի էր կաթողիկոսին ու եպիսկոպոսաց համար միանգամայն՝ ըստ զանազան վկայութեանց զոր ունինք: Այդ շրջանին խաչն էր հայ-

րապետական վառի նշանն ալ, Թ զարուն՝ երբ Յիսէի Հայս կու գար ամիրապետին կողմանէ, Ջաքարիա կաթողիկոսն անոր ընդ առաջ գնաց. և այնքան հաճոյ եղաւ, կ'ըսէ Վարդան, որ արաքացին իրեն հրաման տուաւ « զրօշս բառնալ՝ խաչ ի վերայ նորա, և մտանել առաջի նորա միշտ »: Հայրապետին սովորական իրաւունքն էր, և նշանակն անոր հոգեւոր իշխանութեան, զոր կը թոյլատրէր Յիսէ կրել մինչև իւր առջև անգամ: Միւրիւր Այրիվանեցին հաւանօրէն սխալ կը հասկանայ Վարդանայ խօսքը, երբ կ'ուզէ որ Յիսէ իսկ նուիրած լինի զրօշը. « Ես ալամ և խաչ ի վերայ՝ Ջաքարիա կաթողիկոսին » (էջ 55): Մահմետականը չէր կարող խաչադրօշ ունենալ, իսկ զայն պատրաստելու և տալու համար՝ անոր սովորական նախազաղափարը տեսնելու էր հայրապետին քով: Յամենայն դէպս՝ հին էր հայրապետական զրօշը. և փոխան նշանի ունէր խաչը, հաւանօրէն ոչ պատաստին վրայ, այլ ընին ծայր, « ի վերայ », նման Ս. Կղեմայ վերոյիշեալ օրինակաց, և ուրիշ տոհմային նշանաց զորս պիտի տեսնենք: Անոր միւս հանգամանքները նկատենք յաջորդ համարին մէջ:

Գ. — ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ: — Սոյն պիտի զրօշ մ'ալ կայ պատմութեան մէջ, աւանդեալ իրենց պատմէն՝ զոր ըստ նորին վկայութեան առեր է նոյն վիճակին հին առաջնորդներէն Պետրոս եպիսկոպոսն, ինչպէս յիշեցինք (աստ, 8): Որքեւան կ'ըսէ՝ թէ Ե զարուն Աղուանից Եսփաղէն թագաւորը՝ Սիւնեաց առաջնորդին Անանիայի կը շնորհէ մեզ արդէն ծանօթ « գիւր թագաւորական զրօշն՝ կարմիր և ոսկեւտուն վառի, ունելով ի գլուխն գոնետ ոսկի, և ի վերայ խաչ պատուական »: Երով հոս ալ բուն վառին վրայ խաչին ձեւը չկար ու

1. Վարդան Պատմէ, Վեներիկ, 1862, էջ 85:

չի յիշուիր. և կը հրամայէ որ միշտ տարուի Սիւնեաց եպիսկոպոսին առջեւն (17). և այս՝ ի վարձատրութիւն աղուանական տաճարի՝ զոր իբր թէ Անանիա հնարեւ է օգնու. թեամբ Բնեւիսիսի՝ որ ծանօթ է հայ տարից գրեւորին առթիւ (39):

Այս աւանդութեան տարեբերը պղտոր են. Ըստ Կորեան՝ Աղուանից աբղորները կերտողը Մեարոր եղաւ. իսկ Պետրոս՝ Ուրբեղեի աղբիւրն՝ աներեղոյթ է և կասկածելի, ինչպէս դիտել տուի (աստ, 39): Բան մը սակայն շատ յայտնի է. Սիւնեաց առաջնորդաց և յատկապէս անոնց պատմչին անդուլ ջանքերն ու պահանջները՝ փառաւորելու իրենց աթոռը, զրեթէ հաւասարեցնելու հայրապետականին, մետրապոլիտութեան պատմելը, նախագահութեամբ ի ժողովս, բարձակցութեամբ կաթողիկոսին հետ, ոսկեթիւ բազմականով, հայրապետական բազմախաչ նափորտով, «աստուածապատիւ հոգեւոր տէր» տիտղոսով. վերջապէս հայրապետական պատուոյ ամէն նշանակներով. և այս բոլորին վերագրելով կեղականք ծագունները՝ որոց մասին խօսել տեղոյս չէ. և երբեմն պատամբելով իսկ կաթողիկոսէն: Հակամէտ եմ հաւատալու՝ թէ նոյն աղբիւրէն էր անոնց դրօշն ալ. այս ինքն հայրապետականին նմանողութեամբ, թէ և մի և նոյն ժամանակ Աղուանից և Հայոց Թագաւորաց ալ սեպհական լինէր այն (աստ, 8, 39). և հայրապետէն ընդունուած՝ ոչ կանուխ քան զԲագրատունեաց Թագաւորութիւնը, եթէ Սիւնեաց առաջնորդը կրնար այսպիսի արքունական ձևով մը ճոխանալ, «ըջափ աւելի ազգին հոգեւոր գլուխը պիտի զարդարուէր անով: Անանիա կաթողիկոսը նուանելով Սիւնեաց ապատամբ աթոռը, կապուեց անոր նախկին իրաւունքները: Յետոյ Սարգիս կթղ. կը ձեռնադրէ անոնց զտէր Յովհաննէս, և վերստին կը շնորհէ անոր ի մէջ այլոց և «զոսկեցուտան վառն» (Ստ. Որբ. 222): Սարգիս զայն իւր ձեռնադրելոյն նուիրելու համար՝ նախ ինքն ունենալու էր: Վերջա-

պէս նկատենք՝ որ կաթողիկոսին գնդագլուխ զաւազանը, ծանօթ Տաթեացոյն օրով, որ ըստ նոյն վարդապետին կը նշաւ նակէր հայրապետին իշխանութիւնն ամբողջ ազգին վրայ (Քրդ. ձր. 168), սերտ աղերս ունէր սոյն դրօշին հետ, ինչպէս արքունի զաւազանն ու վառն իրարու հետ (աստ, 40):

Գ. — ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔԻ — Հայրապետականէն կամ Սիւնեաց մետրապոլիտականէն զատ՝ բոլոր եկեղեցիք ունէին սրբազան վառեր, աւելի կամ նուազ հարուստ՝ ըստ կարողութեան ու ճաշակի նուիրողին: Այսպէս Ժ դարուն՝ Գուրգէն արքունի իւր և հարապատին ձեռակերտ Սիոն եկեղեցոյն կ'ընծայէ «ոսկեկերտ խաչադրօշեալ՝ ընդելուզեալ մարգարտով և ակամբց պատուականօք հրաշագործեալ» (Թովմ. 288): Եւ նախկին Գուրգենի մէկ ճակատամարտին մէջ ընդդէմ Բուդայի՝ քահանայը կ'երկին «հաւնակ իւրեանց կանգնեալ զեղան խաչի» (նոյն, 165): 1136ին՝ Քենոյ պաշարման պահուն՝ քաղաքին քահանայը «խաչիք վառելովք» պաշտօն կը մատուցանէին, կ'ըսէ մեզ Մատթէոս Ուռհայեցի (ՄՄԳ): Այս վառերը կը ձեռնուէին կ'երկին դեռ Ժ դարուն: Առաքել դարի՝ ժեցին կը պատմէ՝ թէ երբ Շահաբաս Աղուլիս կը մտնէր, տեղոյն կողմը խաչով՝ աւետարանով և «ամբարձեալ խաչարամ», շահին ընդ առաջ զնացին (Իլ.): Ինչ որ մեք ունէինք, մեր դրացի Աղուանք ալ ունէին. և երբ 1220ին Թաթարք անոնց աշխարհը խուժեցին, երէց մը, կ'ըսէ Կիրակոս, իւր ժողովուրդն առած, «խաչիք վառելովք ընթացաւ առաջի նոցա». բայց փոխանակ զթուրքեան՝ մահ գտնելով (էջ 103): «Խաչիք վառելովք» կը նշանակէ ըստ տառին խաչ՝ որոյ վրայ վառ կատուած է, ոչ թէ վառ երեսին խաչ ձևացած: Սակայն աղոր հակառակն ալ կար. Գուլիելմոս Իբրերիկացի, ուղևոր առ Թաթարս 1253ին, կը պատմէ՝ թէ վանականի ձևով հայ մը, Սարգիս, որ այն կողմերը կը Թափառէր, «վառ մը շինեց՝ համակ

1. Կորեան, վննաթիւ, 1883, էջ 18.

ծածկուած խաչերով. և երկայն եղէգ մը գտնելով իբրեւ տէգ, անոր վրայ անցուց »¹: Կրնանք հետեցնել՝ որ այս ձեւը ծանօթ էր Հայոց մէջ:

2. — Վառերու կանոնաւոր գործա-

կը դնէ ամէն յուղարկմանց, ըսելով. « խաչն վառեալ յառաջ » (Հարց. Ժ, Ե). և անոր նիւթական նկարագրին հետ խորհրդական մեկնութիւնն ալ կու տայ՝ ըստ իւրխորհրդապաշտ տեսութեանց, գրելով.

« Եւ այն որ ի վերայ վառին նիւթեղէն զգեստ է, զի գայցէ խաչն ի վերայ լուսեղէն ամպոյ, ... զոր նշանակէ մանր վարչամակ վառին » (անդ): Հոս ալ խաչը զատել կը թուի վառէն, որ այս պարագային « մանր » է կամ փոքր. ինչպէս զատ է արդարեւ Ս. Ղազարու մաշտոցի մը (1704ին) նկարին մէջ ևս, ուր զպիւր մը դազադին առջևէն կը տանի կարմիր ու երկնիւղ դրօշ մը, որոյ բունը խաչով կ'աւարտի. գոյն և խաչ կատարելապէս համաձայնը վերոյիշեալ կղեմեան օրինակաց: Սոյն վկայութեանց մէջ միանգամայն ակնեբեւ է՝ որ վառն ազնուականաց թաղման մէջ թուով աւելի էր, և ուսմկաց՝ մի միայն:

3. — Հայ հնութիւնը պահած է մեզ գեղեցիկ օրինակ մ'եկեղեցական դրօշի՝ Էջմիածնի թանգարանին մէջ, որոյ ձեւը յառաջ կը բերեն Սհկ. Վ. Աստուածատրեան², Պր. Ա. 20 պանեան³, և ես այս տեղ (24 6): Եւ է կերպասեայ, չորեքկուսի, երկայնութիւնը քիչ մ'աւելի քան զլայնութիւնը, և աւարտած երեք արծակ ժապաւենով, որոց երկայնութիւնը


ճութիւնը կը յիշուի նաև յուղարկաւորութեանց առթիւ: Զօր օրինակ՝ ԺԳ դարուն Որբելեան Սմբատայ թաղումը կը կատարուի « խաչիչ վառելովք » (Ստ. Որբ. 307): Գր. Տաթևացին նոյնն իբր սովորական

վառին կիսուն չափ է: Ընտիր և նուրբ ասորդնեգործութիւն գունագոյն և ոսկեթել: Մէկ երեսին վրայ փրկչական պատկերը, նստած յաթոռ, ծախողն աւետարան բռնած և աջով կ'օրհնէ: Իւր բազմոցին չորս ան-

1. Guill. De Rubruquis, *Voyage en Tartarie*, Ե. ԼԸ:

2. Պատկերացոյց հաշաք. հետք. Էջմ. Պր. Ա. Բ. 1, 20

3. Հայ Էրեբ, Պարիս, 1912, պատ. 15:



Ձև 6. — Էջմիածնի վառը.

կենաց քով կան աւետարանչաց չորեք-կերպեան կենդանիք, և զլիոյն վերեւ աւելցան ու լուսին: Միւս երեսին վրայ, որ մեր պատկերինն է, կանգնած է Լուսաւորիչը՝ սրբազան զգեստով և լատին խուրով: Իւր աշակողմը Տրդատ, ձեռքին աղօթական ու նայելով Լուսաւորչին: Ժախակողմն Հոփփսիմէ, աջովը խաչ բռնած ու ձախը հրամարական ձեռով, և երկուքն ալ բիւզանդական արքունի տարազն ունին: Յիշատակարան մը, որոյ թուականը ջրն-ջրած է, իբր նուիրատուն կը նշանակէ զՍիմէոն քահանայ և ամուսինը Քամալ խաթուն: Նշանաւոր է առաջին տողը, «Վառս վայելէ իշմիածնի», որուն նուիրում էր: Պատկերներն այնպէս շինուած են՝ որ վառը դէպ ի վայր կախուի բնէն, ոչ թէ մեկուսի կարկառի: Ճիշդ ինչպէս կը տեսնենք վերոյիշեալ կղեմեան վառերն ու ժեղ դարուն արեւմտեան եկեղեցական դրօշներն ալ (Desjardins, 123):

Առաքել դաւրիժեցի յառաջ կը բերէ Յայսմաւորի յիշատակարան մը, յորում կը պատմուի Լուսաւորչի աջոյն փոխադրութիւնն իշմիածնէ յԱղթամար՝ 1462 թուին, Ջաքարիա Բ կաթողիկոսի ձեռամբ, «Հանդերձ խաչալամով» որ նկարեալ կայր ի մի կողմն պատկերն տէրու նախան, և ի միւս կողմն Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, և թագաւորին Տրդատայ և չքնաղագեղի կուսին սրբուհւոյն Հոփփսիմայ. այլ և ոսկեթել յօրինուածով և ազգի ազգի գունով երանգ երանգ զարդարեալ» (1): Մեր դրօշն է որ կը նկարագրուի, և որ այն ժամանակներէն տեսողաց աչքերը կը խաղէր: Իւր գոյութիւնն ուրեմն կանուխ է քան զ1462: Իսկ իշմիածնին բնծայութիւն մեր միտքը կը տանի թուականէս քսան տարի յառաջ, երբ հայրապետական աթոռը Սանէ հոն կը փոխադրուէր, և ժողովրդեան հոգին կ'արծարծէր՝ իւր ցնծութիւնը յայտնել տալով սոյնպիսի թանգ նուէրներով:

Այս վառն բնծայուած էր «Իշմիածնի», ոչ կաթողիկոսին, ուրեմն հայրապետական

չէր, կամ գոնէ տարբեր հայրապետականին նախկին նկարագրէն. զի ըստ Յայսմաւորին՝ «բարձրացեալ կայր ի ծայրս ձողոյ, և խալ ոսկի կառուցեալ ի գլուխըս նորա», առանց յիշելու գունդը: Իւր գեղեցկութեան ու խորհրդաւորութեան համար, Ջաքարիա երբ կ'անցներ քաղաքներէ, նոյն «խաչալամն առաջի գնայր, ունելով ի գլուխն զխաչ ոսկիածոյլ լուսոյ նման»: Ժեղ դարու վերջերը վրթանէս անուն եպիսկոպոս մը գողցաւ զայն ու յիշմիածին դարձուց. իսկ ժամանակը մաշեցուց ու դրաւ այժմու վիճակին մէջ: Այսքան ծանօթ է ինձ ցարդ եկեղեցական հին ու պատմական դրօշներէ, որոց նորերը չեն հետաքրքրեր ոչ զիս և ոչ ընթերցողներս, ու չեն ստիպեր զիս գրադելու իրենցմով:

ԱՄՓՈՓՈՒՄՆ

Եկեղեցական դրօշներու ծագումն անծանօթ, բայց գոյութիւնը բաւական հին է թէ միւս ազգաց և թէ Հայոց մէջ, Ը-թ դարերուն արդէն յիշատակուած, և հետեւեցող մնացած: Թէն այժմ անոր գործածութիւնը նուազած է մեր քով: Անոնց մէջ ըստ նուիրապետական կարգի կային.

1. — Հայրապետականը, որոյ պատառն էր կտրմիր: Բնին գլուխն հաւանօրէն ոսկի գործը մը, և ասոր վրայ խաչ մը, ձման արքայական դրօշին ու հայրապետական գաւազանին:

2. — Միւսնաց մետաղադիրք նոյնը սեպհականեցին իրենց միջին դարուն, ըստ իս՝ հետեւողութեամբ կաթողիկոսին:

3. — Եկեղեցաց սեպհականը, որոց պատառը կը գանազանէր ըստ արուեստի, լինելով կտրմիր, կամ գունազոյն առնեցողը, կամ ծածկուած ազնիւ քարերով, սրբազան պատկերներով: Իսկ բունը կը վերջանար խաչով՝ աւելի կամ նուազ հարուստ, և վառը սովորաբար կը կախուէր դէպ ի վայր՝ անոր ներքեւ:

Հ. ՎԱՐՈՒՆ ՀԱՅՈՒՆԻ